

ՍՎԵՏԼԱՆԱ ՄԱՆՈՒԴԱՐՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Ա.Մարգարյանի բարբառագիտական հայացքներն ամփոփվում և ամբողջանում են «Գորիսի բարբառը» մենագրության մեջ: Մարգարյանն առաջին անգամ գիտականորեն քննել և աճառայանական մեթոդի կիրառմամբ գրառել է Գորիսի տարածաշրջանի խոսվածքները և այն՝ իբրև բարբառ, առանձնացրել է Ղարաբաղի բարբառից: Հնչյունական և քերականական իրողությունները լեզվաբանը քննել է՝ համեմատության եզր ընդունելով գրաբարը: Հետազոտության նյութի շրջանակում ներկայացրել ենք այ լեզվաբանների տեսակետներ ևս:

Բանալի բառեր՝ Ղարաբաղի բարբառ, Գորիսի բարբառ, խոսվածքներ, ընդհանրություն, տարբերակիչ հատկանիշ, զուգադրական մեթոդ:

20-րդ դարի 70-ական թվականներին ավելի է ծավալվել հայերենի բարբառային միավորների գրառման գործընթացը: Բարբառագիտական հայտնի մենագրությունների թիվը համալրվում է ևս մեկով՝ «Գորիսի բարբառը» (1975) աշխատությամբ՝ շնորհիվ մեծանուն լեզվաբան Ալեքսանդր Մարգարյանի: Նրա լեզվաբանական հարուստ ժառանգության մեջ կարևորվում է նաև բարբառագիտական հայացքներն արծարծող և ամփոփող հոդվածներն ու նշած հետազոտությունը, որն արժեքավոր է հայ բարբառագիտության բնագավառում: Մեզ իրավունք ենք վերապահել այս նյութի շրջանակում քննելու և նորովի գնահատելու բազմավաստակ լեզվաբանի՝ հայ բարբառագիտության պատմության մեջ ունեցած ներդրումներն ու հայեցակետերը:

Հայ բարբառագիտության մեջ դեռևս անցյալ դարասկզբից մինչև 40-ականները համարվել է հայ բարբառների դասակարգման ձևաբանական սկզբունքի գերակայության փուլ, որին հաջորդել է 1969թ.-ին լույսընծայած «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատության մեջ Գևորգ Ջահուկյանի մշակած բարբառների դասակարգման բազմահատկանիշ սկզբունքը: Հաճախ բարբառագիտական աշխատությունների հեղինակները բարբառ են համարել այնպիսի միավորներ, որոնք Հ. Աճառյանը, Ա. Ղարիբյանը և Գ. Ջահուկյանն ընդունել են որպես ենթաբարբառ կամ խոսվածք: Հարկ է նշել, որ Է. Աղայանը, Հ. Մուրադյանը, Մ. Ասատրյանը, Ա. Մարգարյանը և այլք բարբառագիտական ուսումնասիրությունների ժամանակ հիմք ընդունեցին բարբառների քննությունը Հ. Աճառյանի՝ առաջադրած ձևաբանական, միահատկանիշ սկզբունքով, որի կիրառմամբ էլ գրանցեցին լեզվական մի շարք տարածքային տարբերակներ (*Մեղրի, Կարճևան, Կաքավաբերդ, Խոյ, Գորիս*): Բարբառային նոր միավորների գիտական մոտեցմամբ գրառումը հատկանշական էր հատկապես հայերենի բարբառագիտական ատլասի կազմման շրջափուլում: Նմանաբնույթ հետազոտությունների ժամանակ համեմատության եզր էր ընդունվում գրաբարյան իրողությունը: Ձևաբանական սկզբունքը հնարավորություն էր ընձեռում որոշելու, թե տվյալ բարբառը կամ խոսվածքը քերականական ինչ յուրահատկություններ ունի, մասնավորապես սահմանական եղանակի ներ-

կա և անցյալ անկատար ժամանակաձևերի արտահայտման դեպքում, և ըստ այդմ տվյալ բարբառային միավորը դասվում էր **ՌԻՄ, ԿՐ, ԵԼ** և **Ս** ճյուղերից մեկում:

Գ. Ջահուկյանը, «Հայ բարբառագիտության ներածության» մեջ բազմա-հատկանիշ դասակարգման սկզբունքով դիտարկելով 120 բարբառային միավոր, Ղարաբաղ-Շամախիի կամ ծայր հյուսիսարևելյան միջբարբառախմբի Ղարաբաղի բարբառի մեջ առանձնացնում է նաև Գորիսը [111]¹, բայց իբրև ինքնուրույն բարբառ չի ընդունել: Հրաչյա Աճառյանը, չնայած Գորիսը դասել է **ՌԻՄ** ճյուղի Ղարաբաղի բարբառի կազմում որպես «Գորիսի (Չանգեզուր) ենթաբարբառ»², սակայն «Հայերեն գալառական բառարանում» և «Արմատական բառարանում» բարբառային ձևերը նշելիս տարբերակել է Ղարաբաղը և Գորիսը՝ նշելով «**բահ - Ղրբ. պիհ(ի), Գոր. պյն հ**»³: Իսկ «Քննութիւն Ղարաբաղի բարբառին» մենագրության մեջ, խոսելով ձայնավորական փոփոխությունների մասին, Հ. Աճառյանը գրում է. «Գորիսի բարբառով նաև կա՛րալ՝ կարենալ», «պէ՛պէգլ կամ Գորիսի բարբառով պէ՛պիկ՝ բոկոտն, բոպիկ»⁴ (ընդգծումը մերն է-Ս.Մ.): Հետևաբար Հ. Աճառյանը, թեկուզ վերապահումով, բայց Գորիսի տարածաշրջանի խոսակցական լեզուն համարել է **բարբառ**:

Գորիսը՝ իբրև բարբառ, առաջին անգամ գիտական քննության է ենթարկել Ալեքսանդր Մարգարյանը: Նա ևս, հաշվի առնելով Ստ. Սյունեցու վկայությունը, ըստ որի՝ Սյունիքն ու Արցախը եզրային բարբառներ են («...զբառսն եզերականս, որպես... զՍիւնիս եւ զԱրցախայինս...»)⁵ հիշատակված առանձին, իր մենագրության մեջ համեմատելով դրանք, նշում է նախ՝ դրանց լեզվական ընդհանրություններն ու յուրահատկությունները, ապա՝ քննել է Գորիսի տարածաշրջանի խոսվածքները՝ կարևորելով դրանց տարբերակիչ հատկանիշները, որոնք դրսևորվում են լեզվի տարբեր մակարդակներում: Հավելենք, որ, ըստ խոսվածքային տարբերակիչ հատկանիշների, բարբառակիրները հեշտությամբ զանազանում են միմյանց՝ որ գյուղից կամ համայնքից լինելը:

Ինչպես Ա. Մարգարյանն է գրում, «Գորիսի բարբառը խիստ տեղայնացված բարբառ է»⁶: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ ինչպես Ղարաբաղի և Արարատյան բարբառները, այնպես և Գորիսը, ըստ բարբառների դասակարգման ձևաբանական սկզբունքի, պատկանում է **ՌԻՄ** ճյուղին: Աշխարհագրորեն Գորիսը տեղակայված է Ղարաբաղի և Արարատյան տարածքային տարբերակների միջև, ուստի, բնական է, որ, իբրև բարբառային գոտի, նրանում գործուն պետք է լինեն և՛ Արարատյան, և՛ Ղարաբաղի բարբառներին բնորոշ հնչյունական և քերականական իրողությունները: «Գորիսի բարբառը սովորաբար Ղարաբաղի բարբառի մեջ է առնվել և դիտվել իբրև դրա ենթաբարբառներից մեկը»⁷: Հարգարժան լեզվաբանը, համեմատության եզր ընդունելով գրաբարյան իրողությունները, տարածամասակյա մեթոդի կիրառմամբ քննել է բարբառային այս միավորի հնչյունաբանությունը, իսկ «Բառագիտություն» և «Ձևա-

1 Տե՛ս **Ջահուկյան Գ. Բ.**, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 135-136:

2 **Աճառյան Հ.**, Արմատական բառարան, հ. Ա, Երևան, 1926, էջ 21:

3 Նույն տեղում, էջ 393:

4 **Աճառյան Հ.**, Քննություն Ղարաբաղի բարբառին, Վաղարշապատ, 1899, էջ 61,81:

5 **Մարգարյան Ա.**, Գորիսի բարբառը, Երևան, 1975, էջ 6:

6 Նույն տեղում, էջ 3:

7 Նույն տեղում, էջ 7:

բանություն» բաժինները ներկայացրել է նաև նկարագրական մեթոդով՝ կարևորելով լեզվական տվյալ իրողությունների՝ այդ ժամանակաշրջանում առկա բարբառային տարբերակները:

Ա. Մարգարյանը հնչյունական-հնչուլթաբանական մակարդակում նշում է 4 տարբերակիչ հատկանիշ՝ ձայնավորների քանակը, երկբարբառների առկայությունը, քմային բաղաձայնների գործածությունը և ձայնավորների հնչյունափոխության տարբերությունները: Ղարաբաղի բարբառում ձայնավորները 10-14-ն են, իսկ Գորիսում ինը, այսինքն՝ գործածական են գրական լեզվին բնորոշ **ա, օ, ու, է, ի, ը** հնչույթները և հետևալեզվայինների քմային տարբերակները՝ **ւ̄, օ̄, ու̄** (օր.՝ **լւ̄ւլ, ծօր, լո̄ւզո̄ւ**): Հարկ է հավելել, որ Սյունիք-Արցախ բարբառային գոտում **ւ̄, օ̄, ու̄** քմայինները ինքնուրույն հնչույթներ են, քանի որ համաժամանակյա հայեցակետով ևս ստեղծում են հնչյունական հակադրություններ, այսպես՝ **գալ-կւ̄ւլ, կալ-կալ, ձոր-ծ օ ր, ծոր-ծօր, գոմ-կ ու̄ մ, կում-կում** և այլն¹: Նմանաբնույթ օրինակներ հանդիպում ենք նաև խնդրո առարկա մենագրության մեջ, սակայն հեղինակը հնչյունական իրողությունը իբրև այդպիսին, չի դիտարկել²: Մարգարյանը **ը**-ն ինքնուրույն հնչույթ չի համարել, քանի որ այն միայն «...առանձին գյուղական խոսվածքներում որոշ բառերի մեջ մաքուր **է**-ի...»³ փոխարեն է լսվում, գտնելով, որ չունի հնչույթային արժեք և իմաստատարբերակիչ դեր: Սակայն, ինչպես ժ. Միքայելյանն է գրում, «երկու տեսակ **է**-ի արտասանությունը հատուկ է ոչ միայն «առանձին», այլ գրեթե բոլոր գյուղերին ու Գորիս քաղաքին:...Ետին շարքի բաց **ը**-ն հանդիպում է գրաբարյան խոսքի, շնչել խոսքի բաղաձայնների և ձայնորդների մոտ...»⁴, իսկ առաջնային փակ **է**-ն՝ գրաբարյան ձայնեղներից առաջացած խուլերից հետո, այսպես՝ **բերան>պերւն, դեգ>տեգ**, բայց՝ **կեղ>կըհ, պճեղն>պըճըհը**⁵ և այլն: Մի խումբ միավանկ բառերում այս հնչյունը համապատասխանում է գրաբարյան **ի**-ին (օր.՝ **միտ(ք)>մետը//մետկը//մէթկը, պինդ>պենդ//պէնդ, քիթ>քեթ//քէթ** և այլն⁶): Համամիտ լինելով ժ. Միքայելյանին՝ կարծում ենք, որ **ը**^{է/է}-ն, լինելով **է**-ի դիրքային տարբերակ⁸ և գործառվելով արդի ժամանակափոխում ևս, հարկ է դիտարկել որպես առանձին հնչյուն, չնայած սակավ են դրանցով կազմված իմաստային զույգերով օրինակները՝ **կերան** «գերան»-**կէրան** «*ուտել* բայի անցյալ կատարյալ», **տեգ** «դեգ»- **տէգ** «տիգ», **կետ** «գետ»-**կէտ** «ճանճի տեսակ»⁹: Նշենք նաև, որ Գորիսի խոսվածքներում Մարգարյանը՝ չի առանձնացնում ոչ միայն բաց հնչում և ստորին դիրք ունեցող **է**-ն, այլև **ա**-ն, **օ**

1 Այդ մասին տե՛ս նաև **Միքայելյան ժ.**, Գորիսի խոսվածքի հնչյունա-հնչույթաբանական մի քանի առանձնահատկություններ, Առանձնատիպ ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 1980, № 8, էջ 44:

2 Օրինակների մասին տե՛ս **Մարգարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 25:

3 **Մարգարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 23:

4 **Միքայելյան ժ.**, նշվ. աշխ., էջ 42:

5 Օրինակները տե՛ս նաև նույն տեղում:

6 **է**-ով տարբերակները տե՛ս Մարգարյան Ա., նշվ. աշխ., էջ 49:

7 Այս և մյուս բարբառային հնչույթներն ու օրինակները նշել ենք նոր տառադարձման, որի մասին տե՛ս **Աղաբեկյան Մ., Հանեյան Ա., Ուռուտյան Ռ.**, Հայերենի հնչատարբերակների տառադարձման նոր համակարգը, Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 3, Երևան, 2010, էջ 5-21:

8 **Խաչատրյան Ա.**, ժամանակակից հայերենի հնչույթաբանություն, Երևան, 1988, էջ 34:

9 Օրինակները տե՛ս նաև **Միքայելյան ժ.**, նշվ. աշխ., 1980, էջ 45:

-ն¹, որոնք լծորդական շարքեր են ձևավորում նույն ձայնավորների գրական և քմային տարբերակներով (**ԱՄ-ա-Ա**), օր.՝ **Աման, խըմ Օր** և այլն: Գրաբարյան երկբարբառները մի շարք բարբառնային տանրածքներում, այդ թվում և Գորիսում չեն պահպանվել և վերածվել են պարզ ձայնավորների: Սակայն Ղարաբաղի բարբառում, ինչպես վկայում են Կ. Դավթյանը և Ա. Պողոսյանը, գործառում են **ը^Է, ը^Ի ը^Օ, ու^Է, ու^Ի, ու^Ը, օ^Ը** երկբարբառները², այնինչ Հ. Աճառյանը նշում էր **էյ-ը, օյ-ը, ուա-**ն, օր.՝ *ղէյնը* «եղունգ», *կըրոյնը* «կրունկ», *թըթուաշ* «թթվաշ» և այլն³: Մարգարյանը Գորիսի տարածքային տարբերակների հնչունահնչույթային համակարգերում գրաբարյան **ուա** և **ուե** հնչունակապակցություններում նշում է **ու>վ** անցումը (օր.՝ *չուան>չըվան//չուվան, կուուեի>կըուվեի⁴*), իսկ Ժ. Միքայելյանը գտնում է, որ **բաղաձայն+ու+ ձայնավոր** հնչունական դիրքում **վ, ու, ւ** հնչուններից հանդես է գալիս **ւ-ն**, և «Գորիսի խոսվածքում առկա է **վ, ու, ւ** հնչունների ենթահնչույթային»⁵ հարաբերություն: Հավելենք, որ **ո** և **ե** ձայնավորների բառասկզբում դրսևորվող փոփոխությունը երկբարբառային չէ. այս հնչունափոխությունն ընդհանրապես հատուկ է Ղարաբաղի բարբառին: Համեմատելով քմային բաղաձայնների առկայությունը ուսումնասիրվող բարբառային գոտում՝ Մարգարյանը վկայում է, որ Ղարաբաղի բարբառը հարուստ է քմային բաղաձայններով (**գ/ձ, կ, ք, հ, դ, լ, ծ**), բայց Գորիսի տարածաշրջանում դրանցից գործածական են **գ, կ, ք** հնչունները, հմմտ. Դրբ.՝ **ծաղեգ**-Գոր.՝ **ծաղիկ/ծաղեգ, կօղ-կ օ ղ/կօղ, կըռե ք-կեռիք, ըրի հ նակ-ըռեքնակ/իրիքն Ա կ, հան դ -հանդ, կ Ած ալ-կեծակ(ն)ը, լիճ-լիճ** և այլն⁶: Սակայն **ձ, կ, ք** հնչունները հազվադեպ են Տաթև, Սվարանց, Տանձատափ, Բարձրավան խոսվածքներում, որոնք Ալ. Մարգարյանը դասել է խոսվածքների հինգերորդ խմբում:

«Գորիսի բարբառը» աշխատության մեջ Մարգարյանը, հանգամանալից և մանրամասնորեն քննության ենթարկելով խոսվածքներին բնորոշ հնչունական անցումները և փոփոխությունները, երբեմն անդրադարձել է նաև նախածնեին: Բարբառագետական հետազոտությունների համար արժեքավոր և էական տեղեկություններ են պարունակում ինչպես վերհանված հնչունափոխական իրողությունները (անկում, հավելում, կրկնություն, դրափոխություն), այնպես և լեզվաբանի՝ հիշատակած հնչունական օրենքները, որոնցից է ձայնավորների ներդաշնակությունը, այսպես՝ *երդումն> ուրթոմ (ը)*, *երեկոյ> ի ուզոն // որ ուզոն*, *ավելուկ> զ ոլ ոկ // (ի)վոլ ոկ / ով ոլ ոկ* և այլն: Հավելենք, որ բարբառային օրինակները ձևավորվել են հետընթաց առնմանությամբ: Մարգարյանը, սակայն, չի նշում Աճառյանի հնչունական օրենքի մասին, որն արդի ժամանակափոխում ևս գործառվում է և՛ Ղարաբաղի, և՛ Գորիսի բարբառային միավորներում: Տեղին է անդրադառնալ այն հանգամանքին, որ հեղինակը հնչունական-հնչույթաբանական տարբերակիչ իրողություններից է համարել

1 Այս մասին տե՛ս նաև **Միքայելյան ժ.**, նշվ. աշխ., 1980, էջ 39:

2 **Դավթյան Կ.**, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966, էջ 20: **Պողոսյան Ա.**, Հաղորդի բարբառը, Երևան, 1965, էջ 11:

3 **Աճառյան Հ.**, Քննություն Ղարաբաղի բարբառին, Վաղարշապատ, 1899, էջ 14:

4 Տե՛ս **Մարգարյան Ա.**, նշվ. աշխ., 72:

5 **Միքայելյան ժ.**, նշվ. աշխ., 1980, էջ 47:

6 Օրինակները տե՛ս **Աճառյան Հ.**, նշվ. աշխ., 1899, էջ 19-33: Մարգարյան Ա., նշվ. աշխ., 319-334:

քննվող բարբառներում նույն ձայնավորների կրած տարբեր փոփոխությունները հմմտ. **պերց-պւնրց** (<բարձ)¹, որում **ա>ւն>է** հաջորդական անցումն է, այսպես՝ *գարթուն* > **գւնրթն** (Գոր.) > **գերթու/ն** (Ղրբ.), *բարակ* > **պւնրնկ** (Գոր.) > **պերակ** (Ղրբ.), *գագար* > **կւնգար** (Գոր.) > **կեգար** (Ղրբ.), *դառնալ* > **տւնռն** (Գոր.) > **տէ/էռնալ** (Ղրբ.) և այլն: Հնչյունական այս երևույթը Աճառյանի օրենքի դրսևորումն է Սյունիք-Արցախ տարածաշրջանի բարբառային գոտում և, կարծում ենք, տեղին է կարևորել և փաստել, որ Գորիսի խոսվածքներում, ինչպես «Կռզենի, Հավարիկի, Մեղրու և այլ բարբառներում... առկա է օրենքի երկրորդ՝ անցումային շրջանը, իսկ Ղարաբաղի, Խոյի-Մարաղայի, Վանի՝ երրորդ շրջանը»²: Ըստ Ա. Մարգարյանի՝ էական է նաև այն, որ Ղարաբաղի և Գորիսի «բարբառները պատկանում են ձայնեղագուրկ երկաստիճան բաղաձայնական համակարգ ունեցող բարբառների խմբին, հավասարապես շեշտը կրում են բառերի վերջնաթեր վանկի վրա, շատ հաճախ հատկանշվում են հնչյունների միատեսակ և միանման փոփոխություններով»³:

Ա. Մարգարյանը իր մենագրության մեջ օգտագործել է տվյալ ժամանակաշրջանում ընդունված տառադարձությունը ոչ միայն Գորիսի բարբառի հնչյունական համակարգերը և հնչյունափոխական երևույթները ներկայացնելու համար, այլև «Նմուշներ» բաժնում՝ յուրաքանչյուր խոսվածքից բարբառային կյուրթի օրինակ բերելիս, նաև տարբեր բառարաններում և բառացանկերում՝ «Գրաբարից-Գորիսի բարբառ, Բարբառային բառերի բառարան, Փոխառյալ բառերի բառարան, Ռուսերենից փոխառյալ բառերի ցանկ»⁴, որոնք, զետեղված «Երկրորդ բաժին» վերնատառությամբ հավելվածում, արժեքավոր են նաև համաժամանակյա կտրվածքով Գորիսի խոսվածքները քննության ենթարկելիս: Հետագոտելով Գորիսի բարբառի հնչյունական համակարգերը՝ նա պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ կատարել է բարբառային իրողության համեմատում գրաբարի հետ՝ որպես գրառված հնագույն լեզվատարբերակի: Համեմատության եզր ընդունելով գրաբարյան բառաձևը՝ մանրամասնորեն ներկայացրել է յուրաքանչյուր բաղաձայնի կամ ձայնավորի՝ խոսվածքներում կրած փոփոխությունները՝ համապատասխանաբար ըստ դիրքի և ըստ շեշտառության, նաև տվել է մասնավոր հնչյունափոխության դեպքերը, որոնք ևս առանձին խոսվածքների յուրահատկություններ է համարել, ինչպես՝ «ջուխտ» > **ճոխտ** (որոշ գյուղերում նաև **ճօխտ**)⁵ և այլն:

Մեզ թույլ տալով խոնարհաբար կարծիք հայտնել մեծարգո լեզվաբանի բարբառագիտական հայացքների արդիականության մասին՝ գտնում ենք, որ համաժամանակյա կտրվածքով նրա նշած բարբառային որոշ հնչատարբերակներ մասնավորապես Գորիս քաղաքի խոսվածքում կիրառում են տարեց, երբեմն էլ միջին սերնդի բարբառախոսները:

Ինչպես վկայում է Ալ. Մարգարյանը, Գորիսի և Ղարաբաղի բարբառների ձևաբանական մակարդակի տարբերությունները 7-ն են: Հանգամանորեն ուսումնասիրելով Գորիսի բարբառի ձևաբանությունը (մենագրության մեջ՝ էջ

1 **Մարգարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 8:
 2 **Միքայելյան ժ.**, Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները, Երևան, 2009, էջ 65:
 3 **Մարգարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 10:
 4 Տե՛ս **Մարգարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 311-561:
 5 **Մարգարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 59:

117-237)՝ նա նկատում է, որ հիշյալ երկու բարբառային գոտու ձևաբանական համակարգերում առկա քերականական տարբերությունները բավարար են Գորիսի տարածաշրջանի հաղորդակցման լեզուն համարել բարբառ, այլ ոչ թե՝ ենթաբարբառ:

Դիտարկված անվանական զուգաբանությունները երեքն են. սեռական-տրական հոլովածներում Ղարաբաղի **ըԷ/Է** թեքույթի դիմաց Գորիսում գործածվում է **ի**-ին, ինչը հատուկ է նաև մի խումբ բառերի և անորոշ դերբային, որոնք, սակայն, Ղարաբաղի բարբառային միավորներում ենթարկվում են **ու** հոլովման, ինչպես՝ *պատեն//պատու (Ղրբղ)*, բայց՝ *պատի(Գոր.)*, *մօկունեն//մուկնեն//մօկնու*, բայց՝ *մօկնի(ն)*, *օտելու*, բայց՝ *օտելի* և այլն: **Ու-ի** հնչյունական հակադրությունը դրսևորվում է նաև գրաբարյան **-ուրփուն** վերջավորությունը ունեցող բառերի սեռական հոլովածներում, հմմտ. *հըստօթոննու(ն)* (Ղրբ.)-*հըստուրփոննի(ն)* (Գոր.)¹: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ Ղարաբաղի բարբառում ընդհանրական է սեռականի՝ **ն** կամ **ը** հոդառությունը, (օր.՝ *ծառեն ճօղը*, *աշկեն ըռաչեն*, *քըվօրը խօխան*), իսկ Գորիսի խոսվածքներում այն մասնավոր բնույթ է կրում, օր.՝ *հըրըվանի(ն) տօն*, *ըմանի(ն) տակը* և այլն: Չնայած հարգարժան լեզվաբանը իբրև տարբակիչ հատկանիշ չի դիտարկել գրաբարյան **-ուրփուն** վերջածանցի հնչյունական փոփոխությունը՝ **ու>օ//Է**, բայց, կարծում ենք, որ այդ իրողությանը ևս պետք է անդրադառնալ, քանի որ Ղարաբաղի խոսվածքներում քննվող վերջածանցը ունի **-օթուն//օթոն //էթուն** ձևերը, իսկ Գորիսում-**օթուն//օթոն //ուրփուն//ոթ ոն** տարբերակները, ինչպես՝ *մեծուրփուն>մըծէթուն*(Ղրբ.)//*մըծօթուն*(Գոր.), *ընկերուրփուն>հընգըրօթուն//հընգըրէթուն*(Ղրբ.)//*հինգիրօթոն* (Գոր.), նաև փոխառյալ արմատից բաղադրված՝ *դինջուրփուն//դինջէթուն//դինջօթին//դինջօթոն* (Ղրբ.)²//*դինջօթոն* (Գոր.) և այլն: Կարծում ենք, այս հնչյունափոխությունը, որ դրսևորվում է ձևաբանական մակարդակում՝ ձևույթի կազմում, ևս զուգաբանություն պետք է ընդունել:

Քննելով ձևաբանության առանցքը կազմող բայական համակարգերում առկա տարբերությունները՝ Մարգարյանը նկատել է, որ Գորիսի բարբառում ևս ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը կազմավորվում են **-ում** վերջավորությամբ դերբայով և օժանդակ բայով, սակայն օժանդակ բայի խոնարհաձևերը հնչյունափոխված տարբերակներով առանձնանում են: Որպես բարբառային միավորների բայական տարբերակիչ հատկանիշ է ընդունել ապառնի (ապակատար) դերբայի արտահայտությունը: Այն Ղարաբաղի բարբառում ունի **-ական** վերջավորությունը, իսկ Գորիսում՝ **-ու/ոն**, ինչպես՝ **ըպրելու վեմ, փիդին անոն վի, կիրըլական ըս**: Սակայն Հ. Աճառյանը այս դերբայի համար տալիս նաև **-ացուք** վերջավորությունը, որը քիչ գործածական է, օր.՝ «*կըրըլացուք ըմ, կըրըլացուք ի*»³: Տեղին է նշել, որ ներկայումս Ղարաբաղի և Հաղրուփի խոսվածքներում առկա է նաև **-ա/ան** վերջավորությամբ ապառնի դերբայ, որով ևս կազմում են սահմանական եղանակի ապառնի և անցյալի ապառնի, օր.՝ *կըրթիլան ըմ, կըրթիլան ի//կըրթիլան ըմ լան* և այլն⁴:

1 Նույն տեղում, էջ 9:

2 Օրինակները տե՛ս նաև **Դավթյան Կ.**, նշվ. աշխ., էջ 217:

3 **Աճառյան Հ.**, նշվ. աշխ., 1899, էջ 172:

4 **Սարգսյան Ա. Յու.**, Շաղախի ենթաբարբառը Հաղրուփի ենթաբարբառի միջավայրում, Ստեփանակերտ, 2009, էջ 54:

Հավելենք, որ Ղարաբաղի և Հաղրուփի բարբառներում կիրարկվում է ընթացակցական դերբայ, որով արտահայտում են սահմանական եղանակի շարունակական ներկա և անցյալ ժամանակաձևերը, օր.՝ *խըսէլալ ըմ, խըսէլալ հ*¹: Այնինչ Ա. Մարգարյանը այն իբրև բայական զուգաբանություն չի դիտարկել՝ համարելով անորոշ դերբայի գործիական հոլովաձև, քանի որ «նման գործածությունները զուտ որոշ բայերի բայական-բառային իմաստով պայմանավորվող մասնավոր դեպքեր են և բավարար հիմք չեն տալիս այդպիսի դերբայ ճանաչելու համար»²: Հիշյալ ժամանակաձևերը Արցախի տարածաշրջանի բարբառներում գործուն են նաև արդի փուլում: Հարկ է առանձնացնել նաև այն, որ Գորիսի խոսվածքներում սահմանական եղանակի անցյալի վերլուծական ժամանակաձևերը կազմում են դերբայից և օժանդակ բայի անցյալի խոնարհաձևերից, օր.՝ *կանչում հ, մընացալ իր, նըստելու (վ)էր, կաղնած ին* և այլն: Իսկ Ղարաբաղի և Հաղրուփի բարբառային միավորներում այս ձևերին զուգահեռ տարածում ունեն անկատար, հարակատար, ապակատար դերբայների ներկայի ձևերի և **լիւ** բառ-մասնիկի հարադրությամբ կազմությունները, օր.՝ *յէ ում ըմ լիւ, նըստած ըս լիւ, «կըրթիլական ըմ լիւ»*³: Քերականական տարբերակիչ իրողություն կարելի է ընդունել այն, որ, ի տարբերություն Ղարաբաղի, Գորիսի տարածաշրջանի բարբառային գոտում նշված ժամանակաձևերը գործառում են իբրև երկրորդական բաղադրյալ ժամանակաձևեր, օր.՝ *մընում ա (հ) լիւ // մընաս ա լիւ // մընալիս ա (հ) լիւ* «մնալիս է եղել», *նըստած էմ (հ) լիւ* «նստած եմ եղել», *կընչելու վա (հ) լիւ // կընչելու ինի* «կանչելու լինի»: Սյունիք-Արցախ տարածքի քննվող բարբառների ձևաբանական մակարդակի զուգաբանություն են նաև վաղակատար և հարակատար դերբայների կիրարկությունները, թեև Ա. Մարգարյանը չի առանձնացրել դրանք: «Վաղակատար ներկան խոսքի մեջ արտահայտում է նաև վաղակատար անցյալի և անցյալ կատարյալի իմաստներ»⁴ Ղարաբաղի, Հաղրուփի, նաև Կապանի բարբառային միավորներում, օր.՝ *խըմալ ըմ* «խմել եմ, խմել էի, խմեցի»: Քերականական բազմիմաստություն ունեն նաև հարակատարով կառույցները, քանի որ Ղարաբաղում գործածական են վաղակատար-հարակատար ժամանակաձևեր, ինչպես՝ *մըրսած ըս լիւ* «մըսել էիր, մըրսած էիր», *քոն լիւծ ըմ լիւ* «քնել էի, քնած էի, նաև՝ *քնած եմ եղել*»: Իսկ Գորիսի բարբառային գոտում հարակատարը սահմանափակ կիրառություն ունի, ընդ որում՝ այս խոսվածքներում առկա է անցյալ կատարյալի համադրական ձև և վերոնշյալ ժամանակաձևերը, ունենալով առանձին դրսևորումներ, մենիմաստ են, ինչպես՝ վաղ.՝ *կերալ էմ*, հար.՝ *սարքած ա*, անց. հար.՝ *սարքած ին*, անց. կատ.՝ «*կընչեցի, ք (ին) լիւ ցիր, հըսավ, մըծացան*»⁵:

Ձևաբանական տարբերություններից են նաև հարկադրական եղանակի **պիտի** եղանակիչի **բեդմա//պետմա//պեդմա** (Ղրբ.), **պիտի//պետի** (Գոր.) բարբառային տարբերակները, օր.՝ *բեդմա ասիս*, բայց՝ *պետի ասես//ասիլ պետես* և այլն: Մարգարյանը նշում է նաև արգելական հրամայականի կազմավորու-

1 Պողոսյան Ա., նշվ. աշխ., էջ 166:

2 Մարգարյան Ա., նշվ. աշխ., էջ 180:

3 Մարգարյան Ա. Յու., նշվ. աշխ., էջ 54:

4 Նույն տեղում, էջ 55:

5 Մարգարյան Ա., նշվ. աշխ., էջ 192,194:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղաբեկյան Մ., Հանեյան Ա., Ռոռուտյան Ռ., Հայերենի հնչատարբերակների տառադարձման նոր համակարգը, Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 3, Երևան, 2010:

2. Աճառյան Հ., Արմատական բառարան, հ. Ա, Երևան, 1926:

3. Աճառյան Հ., Քննություն Ղարաբաղի բարբառին, Վաղարշապատ, 1899:

4. Դավթյան Կ., Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966:

5. Խաչատրյան Ա., Ժամանակակից հայերենի հնչույթաբանություն, Երևան, 1988:

6. Մարգարյան Ա., Գորիսի բարբառը, Երևան, 1975:

7. Միքայելյան Ժ., Գորիսի խոսվածքի հնչյունա-հնչույթաբանական մի քանի առանձնահատկություններ, Առանձնատիպ ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտություններ», Ե., 1980, № 8:

8. Միքայելյան Ժ., Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները, Երևան, 2009:

9. Պողոսյան Ա., Հադրուբի բարբառը, Երևան, 1965:

10. Ջահուկյան Գ. Բ., Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972:

11. Սարգսյան Ա. Յու., Շաղախի ենթաբարբառը Հադրուբի ենթաբարբառի միջավայրում, Ստեփանակերտ, 2009:

ДИАЛЕКТИЧЕСКИЕ ВЗГЛЯДЫ А.МАРГАРЯНА - СВЕТЛАНА МАНУЧАРЯН

- Диалектические взгляды Ал. Маргаряна обобщены и представлены в монографии «Диалект Гориса». Впервые, с научной точки зрения Маргарян изучил и применил метод Атчаряна, записал диалекты Гориса и отделил его от диалекта Карабаха. Лингвист исследовал фонетические и грамматические реалии, сравнивая их с грабаром (древний армянский).

В рамках этого исследования были также представлены взгляды других лингвистов.

Ключевые слова: Диалект Карабаха, диалект Гориса, говоры, общность, различительный признак, сопоставительный метод.

DIALECTICAL VIEWPOINTS OF ALEKSANDR MARGARYAN - SVETLANNA MANUCHARYAN - Al. Margaryan's dialectic views are summed up and presented in «Goris's dialect» monograph.

For the first time, Margaryan scientifically examined and applying Atcharyan's method recorded the sub-dialects of Goris and separated it from Karabakh's dialect. The linguist examined the phonetic and grammatical realities by comparing with grabar (old Armenian). Within the framework of this research the views of other linguists were presented as well.

Key words: Karabakh's dialect, Goris's dialect, idioms, universality, distinctive feature, metod of composition.